

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### **ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Քարտուղարության ընդհանուր բաժնի 2016 թվականի երրորդ եռամսյակի կատարած աշխատանքների մասին**

2016 թվականի երրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2386 թղթակցություն, առաքվել՝ 1446 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ կառավարության աշխատակազմից՝ 261, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 259, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 492, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 860, քաղաքացիներից՝ 505 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 9: ՀՀ նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 6, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 8, նախարարություններից՝ 2 դիմում: Ստացված բոլոր դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել, կատարվել է նաև դրանց վերլուծությունը:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2016թ. երրորդ եռամսյակում կատարվել է 239 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ նախագահի աշխատակազմ: